ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«03» մայիսի 2019 թվականի № 93-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2019 թվականի ապրիլի 16-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 18 և 2019 թվականի մարտի 14-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 557 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2019 թվականի մարտի 19-ի թիվ Ֆ-73/19 գրությունը, «ՇՈՂԱԳԱ» ՍՊ ընկերության 2019 թվականի ապրիլի 17-ի գրությունը և Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՇՈՂԱԳԱ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 26 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/600 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամասը՝ 1.X=4449014 Y=8516713 2.X=4449015 Y=8516670 3.X=4449198 Y=8516693 4.X=4449197 Y=8516760 5.X=4449187 Y=8516777 6.X=4449147 Y=8516787 7.X=4449109 Y=8516832 8.X=4449100 Y=8516833 9.X=4449075 Y=8516760 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տեղամասում արդյունահանում կատարելու համար, տրամադրելով՝ 280.7 հազար մ^3 մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-600 ակտը՝ 1.X=4449014 Y=8516713 2.X=4449015 Y=8516670 3.X=4449198 Y=8516693 4.X=4449197 Y=8516760 5.X=4449187 Y=8516777 6.X=4449147 Y=8516787 7.X=4449109 Y=8516832 8.X=4449100 Y=8516833 9.X=4448990 Y=8516790 10.X=4448995 Y=8516780 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային

գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 2.4 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 9370մ³ մարվող պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ -600 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ- 600 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանին:

5/2/2019

VERIFIED OCSP 5/3/2019 08:54:49 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ